

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ

Ը.00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ՎԱՍԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՐՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԲԱՐԴԱԽՉՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0025, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 09/07/2024թ.:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ



Ա. Հ. Հակոբջանյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային ֆինանսական միջավայրը լուրջ վերափոխումների է ենթարկվել, որոնք նշանավորվել են բարդ ֆինանսական գործիքների ներդրմամբ և կարգավորողների կողմից տնտեսական շուկերին արձագանքման համապատասխան ճկուն գործիքակազմի առկայության պահանջով: Այս զարգացումները հանգեցրել են ֆինանսական շուկաների և իրական տնտեսության միջև փոխգործակցության մեխանիզմների էլ ավելի ընդգրկուն համակարգի ձևավորմանը՝ իր ազդեցությունն ունենալով ֆինանսական կայունության և տնտեսական աճի կարևորագույն խնդիրներում: Այս ամենի արդյունքում դարեր շարունակ տնտեսագիտության մեջ գերակշռող համարվող այն տեսակետը, համաձայն որի, ֆինանսական հատվածը իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա չունի նշանակալի ազդեցություն՝ տնտեսագիտության մոդելավորման խնդիրներում անտեսելով վարկային և ֆինանսական շուկայում տեղի ունեցող շուկերը, ակհայտորեն ժամանակավրեպ է դառնում, հատկապես 20-րդ դարասկզբին տեղի ունեցած Մեծ Ճգնաժամից և 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո:

Արդյունքում, արդի տնտեսագիտության մոդելավորման խնդիրներում ավելի ու ավելի մեծ ուշադրություն սկսեց դարձվել ֆինանսական հատվածին, և վերջինիս անկատարությունների պայմաններում իրական մակրոտնտեսական շուկերի ազդեցության ընդլայնմանը: Նշված տեսությունը էական զարգացում է ապրել և դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելներում ինտեգրվել՝ անվանվելով Ֆինանսական աքսելերատոր, որը ի ցույց էր դնում այն ճանապարհները, որոնցով ֆինանսական շուկաների տատանումները խորացնում և տարածում են մակրոտնտեսական շուկերը և իրենց ազդեցությունը թողնում իրական հատվածի վրա:

Իրական հատվածի վրա Ֆինանսական հատվածի ազդեցության գնահատման և մասնավորապես վարկային շուկաներում անկատարությունների ուսումնասիրությունը այժմ հատկապես արդիական է Հայաստանում՝ կապիտալի շուկաների թերզարգացվածության և կազմակերպությունների կողմից վարկը, որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր դիտարկելու պայմաններում:

Միևնույն ժամանակ, տեսությունը պնդում է, որ ֆինանսական միջնորդները տնտեսության շուկերի պայմաններում հակված են վարկավորում իրականացնել ավելի կայուն հաշվեկշռային տվյալներ ունեցող և ավելի մեծ ու իրացվելի գրավային ապահովվածություն առաջարկող կազմակերպություններին: Այս համատեքստում կազմակերպությունների կողմից գրավային ապահովվածությունը մեծ ազդեցություն է ունենում իրենց գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու, ներդրումներ իրականացնելու և ի վերջո թողարկում ապահովելու խնդրում: Միևնույն

Ժամանակ, վարկի գրավային ապահովվածության վրա ուղղակի ազդեցություն է ունենում գրավի շուկայական արժեքը: Ակտիվների շուկայական գների՝ հիմնարար արժեքներից նշանակալի շեղումների, կամ այսպես կոչված «փուչիկների» առկայության պայմաններում կազմակերպությունների կողմից առաջարկվող գրավային ապահովվածության արժեքի փոփոխությունը իր ազդեցությունն է ունենում նաև վերջիններիս կողմից ֆինանսական ռեսուրսների հասանելիության վրա՝ այսպիսով դարձնելով վերջիններիս ավելի զգայուն տնտեսական շուկերի նկատմամբ, միևնույն ժամանակ ընդլայնելով շուկերի խորությունը և ազդեցության շրջանակը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ակտիվների գնագոյացման մոդելների ուսումնասիրությունը նույնպես իր կարևորությունն է ներկայացնում և հանդիսանում է ֆինանսական հատվածի՝ իրական փոփոխականների վրա ազդեցության տեսության անկյունաքարերից:

Դիտարկելով Հայաստանում ֆինանսական միջնորդ կազմակերպությունների կողմից, որպես գրավային ապահովվածություն, անշարժ գույքի դիտարկման նախապատվությունը, ինչպես նաև վերջին տարիներին ՀՀ անշարժ գույքի շուկայի գների ցուցաբերած բարձր տատանողականությունը՝ Հայաստանի պարագայում առանձնակի ուշադրության է արժանի անշարժ գույքի գնագոյացման և վերջինում փուչիկների վաղ ճանաչման մոդելների ուսումնասիրությունը, և այնուհետև կարգավորողների կողմից վերջիններիս արձագանքման ճիշտ քաղաքականության կիրառումը:

Իրական և ֆինանսական հատվածների միջև փոխառնչությունների գնահատումը, ֆինանսական միջնորդ ընկերությունների՝ տնտեսական աճի վրա ունեցած ինստիտուցիոնալ ազդեցության հետազոտումը, ակտիվների գների փուչիկների ճանաչման, չափման և կարգավորողների կողմից արձագանքման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու առաջարկությունների ներկայացումը պայմանավորել են ատենախոսության թեմայի արդիականությունն ու հետազոտության կարևորությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը իրական մակրոտնտեսական փոփոխականների (մասնավորապես՝ տնտեսական աճի), և ֆինանսական հատվածի միջև փոխառնչությունների, ինչպես նաև ֆինանսական անկատարությունների պայմաններում արքսելերատորի մեխանիզմի ազդեցության գնահատումն է ՀՀ օրինակով: Ելնելով սահմանված նպատակից, ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների բացահայտմանը վերաբերող տեսական մոտեցումներն ու առավել նշանակալի հետազոտությունները,
- Ուսումնասիրել տնտեսական աճի ինստիտուցիոնալ տեսությունը և հետազոտությունները, գնահատել ֆինանսական ինստիտուտների ազդեցության՝ նշված տեսության շրջանակներում դիտարկելու նպատակահարմարությունը,

• Ուսումնասիրել ակտիվների գնագոյացման, մասնավորապես՝ ակտիվների գների փոփոխների ճանաչման և արձագանքմանն ուղղված տեսություններն ու մոդելները,

• Վերլուծել զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների տնտեսական աճերի դինամիկան և վերջիններիս բաշխման վարքագիծը ժամանակի ընթացքում,

• Սահմանել ինստիտուտների (մասնավորապես՝ ֆինանսական) զարգացվածությունը չափող փոփոխականներ և տարբեր երկրների համար վերլուծել վերջիններիս դինամիկան,

• Վերլուծել ՀՀ-ում կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների վրա ազդեցություն ունեցող գործոնները՝ կենտրոնանալով գրավային ապահովվածության դերի վրա,

• Վերլուծել ՀՀ-ում անշարժ գույքի շուկայի գների դինամիկան և վերջինիս վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող գործոնները,

• Գնահատել տնտեսական աճի վրա ինստիտուտների ազդեցությունը՝ կենտրոնանալով ֆինանսական ինստիտուտների վրա,

• Գնահատել Ֆինանսական քսելերատորի միկրոհիմքերի առկայությունը ՀՀ-ում,

• Վիճակագրական մոդելների կիրառմամբ գնահատել ակտիվների գներում փոփոխների առկայությունը՝ կենտրոնանալով ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա,

• ՀՀ տնտեսության օրինակով գնահատել ֆինանսական քսելերատորի մեխանիզմի ազդեցությունը իրական մակրոտնտեսական փոփոխականների վրա,

• Ներկայացնել նշված ազդեցությունների բացահայտումից բխող քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունների, մասնավորապես՝ տնտեսական աճի վրա ազեցության բացահայտումն է: Հետազոտության առարկան տնտեսական աճի վրա ֆինանսական հատվածի ազդեցության գնահատումն է ֆինանսական քսելերատորի մեխանիզմի ենթադրությամբ ՀՀ օրինակով:

Ատենախոսության գիտական նորոյթ: Ատենախոսության գիտական նորոյթն արտահայտվել է հետևյալ հիմնական դրույթներում.

• Իրականացվել է երկրների համախառն ներքին արդյունքի վրա ինստիտուտների ազդեցությունը չափող վիճակագրական/էկոնոմետրիկական մոդելների գնահատում, և հիմնավորվել է տնտեսական աճի վրա ինստիտուտների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը,

• Որպես ինստիտուտների առանձին համախումբ՝ գնահատվել է ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը երկրների տնտեսական աճի վրա, և հիմնավորվել է տնտեսական աճի վրա ֆինանսական ինստիտուտների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը,

• ՀՀ բանկային համակարգից ստացված ինֆորմացիայի հիման վրա էմպիրիկ վերլուծության միջոցով միկրոմակարդակում հիմնավորվել է ֆինանսական արքեթիվատորի մեխանիզմի առկայությունը ՀՀ ֆինանսական համակարգում,

• Հիմնվելով ՀՀ ֆինանսական համակարգում, որպես արքեթիվատորի մեխանիզմի մաս՝ գրավային ապահովվածության ազդեցության գնահատված կարևորության վրա՝ մշակվել/կիրարկվել են անշարժ գույքի գներում փոփոխությունների վիճակագրական թեստավորման մոդելներ,

• Իրականացվել է ֆինանսական արքեթիվատորի և գերիշխող արտարժույթի ենթադրությամբ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելի կալիբրացիա, գնահատվել են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների շուկերին համախառն ներքին արդյունքի և այլ մակրոտնտեսական փոփոխականների արձագանքը, և մակրոմակարդակում հիմնավորվել է ՀՀ-ում ֆինանսական արքեթիվատորի մեխանիզմի ազդեցության առկայությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառություն գտնել նաև ֆինանսական միջնորդ կազմակերպություններում և մասնավորապես՝ ՀՀ առևտրային բանկերում՝ տնտեսության տարբեր փուլերում վարկավորման որոշումների կայացման և դրա հնարավոր հետևանքների արդյունավետ գնահատման գործընթացներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույքները քննարկվել են ԵՊՀ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ամբիոնի նիստերի ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարությունում, ՀՀ առևտրային բանկերում:

Հետազոտության առանձին արդյունքներ ներդրվել են ՀՀ առևտրային բանկերում:

Աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփվել են թվով 6 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 143 էջում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված գիտական

նորոյթները, հետազոտության գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ֆինանսական և իրական հատվածների միջև փոխառնչությունները»** գլխում նախ ներկայացվում են ֆինանսական և իրական հատվածների փոխառնչությունների վերաբերյալ տեսությունները և մոդելները: Վերը նշված փոխառնչությունների համատեքստում մասնավորապես դիտարկվել են ֆինանսական արքեպիսկոպի մեխանիզմի կիրառմամբ մոդելավորման աշխատանքներ՝ իրականացված տարբեր հեղինակների կողմից և տարբեր տնտեսությունների համար:

Աշխատանքի այս գլխում ներկայացվում են նաև այն ճանապարհները, որոնցով ֆինանսական հատվածում առկա անկատարությունները իրենց ազդեցությունն են ունենում կարգավորողների կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմում՝ անվանվելով վարկային ալիք¹:

Փոխանցումային մեխանիզմի վարկային ալիքի տեսության անկյունաքարերից է հանդիսանում արտաքին ֆինանսավորման պրեմիումի (արտաքին և ներքին ֆինանսավորման ռեսուրսավճարների միջև տարբերության) և կազմակերպության զուտ արժեքի միջև կապը: Արտաքին ֆինանսավորման պրեմիումի որոշման հարցում մեծ ազդեցություն ունի կազմակերպության հաշվեկշռի կայունությունը, ինչպես նաև վերջիններիս կողմից առաջարկող գրավային ապահովվածությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ աշխատանքի այս գլխում անդրադարձ է կատարվում նաև ակտիվների գների գնագոյացման խնդրին, մասնավորապես՝ հիմնարար արժեքներից շեղումներին կամ «փուչիկներին» և վերջիններիս դրամավարկային քաղաքականության արձագանքի հիմնահարցերին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը Համախառն ներքին արդյունքի վրա»** գլխում ֆինանսական և իրական հատվածի փոխառնչությունների ուսումնասիրման նպատակով առաջին քայլով, որպես ազդեցությունները ավելի ավելի մեծ նկարում դիտարկելու առաջնային մոտեցում, ֆինանսական հատվածի դերը ուսումնասիրվել է հենց ինստիտուցիոնալ աճի համատեքստում: Տեսական և կիրառական հետազոտության գարգացման համար իրականացվել է ինստիտուտների ավելի նեղ տարանջատում՝ տնտեսական և քաղաքական ինստիտուտների²:

Համախառն ներքին արդյունքի վրա ինստիտուտների ազդեցության քանակական գնահատման համար, հիմնվելով Աճեմօղլուի և Ջոնսոնի

¹ Bernanke B., Gertler M., “Inside the Black Box: The Credit Channel of Monetary Policy Transmission”, National Bureau of Economic Research, Cambridge, 1995

² Acemoglu D., Robinson J., “Economic Origins of Dictatorship and democracy”, Cambridge University Press, 2006

տեսության³ վրա՝ ինստիտուտները աշխատանքում ևս տարանջատվել են երկու խմբի՝ պայմանագրային ինստիտուտներ և իրավունքների պաշտպանվածության ինստիտուտներ, և գնահատվել է վերջիններիս ազդեցությունը երկրների Համախառն ներքին արդյունքի վրա:

Դիցուք՝ դիտարկվում է հետևյալ մոդելը՝

$$\ln Y_c = \varphi_0 + \alpha \cdot F_c + \beta \cdot P_c + \varepsilon_c$$

Որտեղ Y_c -ը c -րդ երկրի թողարկման մակարդակն է (մեկ շնչի հաշվով PPP-ճշգրտված համախառն ներքին արդյունքը՝ արտահայտված 2017 թվականի ԱՄՆ դոլարներով), F_c -ը պայմանագրային ինստիտուտները չափող փոփոխականն է, P_c -ն՝ իրավունքների պաշտպանվածության ինստիտուտը չափող փոփոխականը:

Y_c -ի համար որպես չափող փոփոխական վերցվել են 2017 թվականի դրությամբ հնարավոր հասանելի բոլոր երկրների մեկ շնչի հաշվով PPP-ճշգրտված համախառն ներքին արդյունքները՝ արտահայտված 2017 թվականի ԱՄՆ դոլարներով:

Երկրների պայմանագրային ինստիտուտների համար որպես չափող փոփոխական վերցվել են Համաշխարհային բանկի հրապարակած պայմանագրերի կատարման համար անհրաժեշտ դատական պրոցեսների որակի ինդեքսի արժեքները:

Սեփականության իրավունքի պաշտպանվածության ինստիտուտի համար որպես չափող փոփոխական վերցվել են սեփականության իրավունքի պաշտպանվածության ինդեքսի ցուցանիշները:

Հավասարումը գնահատվել է երկքայլ փոքրագույն քառակուսիների եղանակով 2SLS՝ ընտրելով խելամիտ գործիքային փոփոխականներ պայմանագրային և իրավունքների պաշտպանվածության ինստիտուտների համար:

Գործիքային փոփոխականներով գնահատման առաջին քայլը հետևյալն է՝

$$F_c = \gamma_1 + \delta_1 I_c + \eta_1 O_c + u_{1c}$$

$$P_c = \gamma_2 + \delta_2 I_c + \eta_2 O_c + u_{2c}$$

I_c -ն իրենից ներկայացնում է 2017 թվականի դրությամբ երկրների անկախության տարիների թիվը. այն կառուցվածքային առումով հանդիսանում է իրավունքների պաշտպանվածության ինստիտուտի համար գործիքային փոփոխական:

O_c -ն բինարային փոփոխական է, որը անվանվում է երկրի «իրավական ծագում» և ցույց է տալիս, թե ո՞ր երկրի գաղութն է եղել կամ ո՞ր երկրի իրավական ակունքներն ունի նշված պետությունը:

³ Acemoglu D., Johnson S., “Unbundling Institutions”, Journal of Political Economy, 2005, vol. 113

Գնահատման համար հիմք են ծառայել 120 երկրների համար հավաքագրված տվյալները: Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի ցուցանիշները, պայմանագրերի կատարման համար անհրաժեշտ դատական պրոցեսների որակի ինդեքսի արժեքները, երկրների իրավական ծագումը վերցվել են Համաշխարհային բանկի հրապարակած աղյուսակներից, իսկ երկրներում սեփականության իրավունքի պաշտպանվածության ինդեքսի տվյալները վերցվել են Սեփականության իրավունքի միության կողմից (Property Rights Alliance) հրապարակած Միջազգային սեփականության իրավունքի ինդեքսի (IRPI) ցուցանիշները 2017 թվականի դրությամբ:

Հավասարումը երկքայլ փոքրագույն քառակուսիների եղանակով գնահատելուց հետո արդյունքները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի կապը պայմանագրային և սեփականության իրավունքի պաշտպանվածության ինստիտուտների հետ՝ գնահատված երկքայլ փոքրագույն քառակուսիների եղանակով

Dependent Variable: LOGGDP				
Method: Two-Stage Least Squares				
Sample (adjusted): 3 179				
Included observations: 117 after adjustments				
Instrument specification: INDEP ORIGIN				
Constant added to instrument list				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
PROP_RIGHTS_INDEX	0.379446	0.166151	2.283736	0.0242
ENFORCE_CONTR_JUDICAL	0.257319	0.081632	3.152169	0.0021
C	5.096031	1.294987	3.935199	0.0001
R-squared	0.357500	Mean dependent var		9.608192
Adjusted R-squared	0.346228	S.D. dependent var		1.189040
S.E. of regression	0.961413	Sum squared resid		105.3718
F-statistic	6.604821	Durbin-Watson stat		2.405420
Prob(F-statistic)	0.001932	Second-Stage SSR		151.7929
J-statistic	2.79E-41	Instrument rank		3

Աղյուսակ 1-ից երևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանվածության և պայմանագրային ինստիտուտները չափող փոփոխականները ունեն նշանակալի ազդեցություն երկրների մեկ շնչի հաշվով

ՀՆԱ-ի վրա: Այլ հավասար պայմաններում Սեփականության իրավունքի պաշտպանվածության ինդեքսի մեկ միավոր աճը բերում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 38% աճի, իսկ երկրի պայմանագրերի կատարման համար անհրաժեշտ դատական պրոցեսների որակի ինդեքսի մեկ միավոր աճը բերում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ավելի քան 26% աճի: Պարզ է դառնում նաև, որ նախկին սոցիալիստական երկրները միջինում զգալիորեն զիջում են մյուս երկրներին իրավունքների պաշտպանվածության ինստիտուտի կայացվածությամբ, բայց սոցիալիստական ծագումը միջինում դրական է անդրադառնում երկրներում պայմանագրային ինստիտուտի կայացման հարցում:

Հավասարումը 2SLS եղանակով գնահատվել է նաև պանելային տվյալներով՝ ընդգրկելով 109 երկրների կտրվածքով մեկ շնչի հաշվով գնողունակությամբ ճշգրտված Համախառն ներքին արդյունքի, սեփականության իրավունքի պաշտպանվածության և դատական պրոցեսների որակի ինդեքսի արժեքները 2015, 2016 և 2017 թվականների ժամանակային միջակայքում: Ստացված արդյունքները համանման են վերը ներկայացված արդյունքներին:

Հաջորդ քայլով աշխատանքում, ավելի լայն քաղաքական և տնտեսական ինստիտուտներից մեկ քայլ առաջ անցնելով՝ անցում գնահատվել է ֆինանսական ինստիտուտների ազդեցությունը մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի ցուցանիշի վրա: Ֆինանսական ինստիտուտների գործունեությունը չափելու նպատակով վերցվել են հեկյալ փոփոխականները՝ հասուն բնակչության 100,000 անձին բաժին ընկնող առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակ, առևտրային բանկերի կողմից մասնավոր հատվածին տրամադրվող վարկերի ծավալ՝ Համախառն ներքին արդյունքից տոկոսային արտահայտությամբ, և տոկոսադրույքի սփրեդ, որը ներկայացվում է որպես բանկերի կողմից վարկերի և ավանդների միջին տոկոսադրույքների տարբերություն: Տվյալները դիտարկվել են 2018 թվականի դրությամբ և հրապարակվում են Համաշխարհային բանկի կողմից:

Մոդելի վերջնական արդյունքները ամփոփված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի կապը ֆինանսական ինստիտուտները չափող փոփոխականների հետ (տարածական տվյալներով մոդել)

Dependent Variable: LOG_GDP				
Method: Least Squares				
Sample (adjusted): 2 192				
Included observations: 75 after adjustments				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.

COMMERCIAL_BANK_BRANCHES	0.017591	0.007650	2.299357	0.0244
DOMESTIC_CREDIT_TO_PRIVA	0.012365	0.002625	4.711155	0.0000
INTEREST_RATE_SPREAD_LE	-0.037178	0.021375	-1.739316	0.0863
C	8.738112	0.264744	33.00587	0.0000
R-squared	0.387149	Mean dependent var		9.408977
Adjusted R-squared	0.361253	S.D. dependent var		1.015445
S.E. of regression	0.811560	Akaike info criterion		2.472141
Sum squared resid	46.76270	Schwarz criterion		2.595741
Log likelihood	-88.70530	Hannan-Quinn criter.		2.521493
F-statistic	14.95063	Durbin-Watson stat		1.781352
Prob(F-statistic)	0.000000			

Այսպիսով, մեկնաբանելով արդյունքները կարող ենք պնդել, որ 100,000 հոգուն բաժին ընկնող առևտրային բանկի մասնաճյուղերի քանակը ունի դրական ազդեցություն մեկ շնչի հաշվով ՀՆԱ վրա. մասնաճյուղերի մեկ միավոր ավելացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ 1,76% աճի: Մասնավոր հատվածին տրամադրված վարկերի ծավալի ազդեցությունը ևս դրական է. վարկավորման՝ որպես ՀՆԱ% մեկ տոկոսային կետով աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ 1.2% աճի: Տոկոսադրույքի սփրեդի ազդեցությունը բացասական է. ներգրավվող և տեղաբաշխվող տոկոսադրույքների տարբերության մեկ տոկոսային կետ աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ 3,7% նվազման:

Պանելային վերլուծության նպատակով վերցվել են վերը նշված փոփոխականների ցուցանիշները 2010-2018 թթ. ընթացքում: Արդյունքները ամփոփված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի կապը ֆինանսական ինստիտուտները չափող փոփոխականների հետ (պանելային տվյալներով մոդել)

Dependent Variable: LOG_GDP		
Method: Panel Least Squares		
Sample: 2010 2018		
Periods included: 9		
Cross-sections included: 111		

Total panel (balanced) observations: 999				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
COMMERCIAL_BANK_BRANCHES	-0.005793	0.001525	-3.799172	0.0002
DOMESTIC_CREDIT_TO_PRIV	0.004734	0.000520	9.104980	0.0000
INTEREST_RATE_SPREAD	-0.008587	0.002163	-3.970699	0.0001
C	9.069690	0.034453	263.2455	0.0000
Effects Specification				
Cross-section fixed (dummy variables)				
R-squared	0.991618	Mean dependent var		9.144787
Adjusted R-squared	0.990547	S.D. dependent var		1.101016
S.E. of regression	0.107045	Akaike info criterion		-1.524071
Sum squared resid	10.14092	Schwarz criterion		-0.964141
Log likelihood	875.2733	Hannan-Quinn criter.		-1.311248
F-statistic	926.5081	Durbin-Watson stat		1.115718
Prob(F-statistic)	0.000000			

Այսպիսով, մեկնաբանելով արդյունքները՝ կարող ենք պնդել, որ պանելային վերլուծության արդյունքում 100,000 հոգուն բաժին ընկնող առևտրային բանկի մասնաճյուղերի քանակի փոփոխականը նշանակալի է, սակայն փոխել է ազդեցության նշանը և ունի բացասական ազդեցություն մեկ շնչի հաշվով ՀՆԱ վրա. 100,000 հոգուն բաժին ընկնող առևտրային բանկի մասնաճյուղերի քանակի մեկ միավորով աճը հանգեցնում է ՀՆԱ 0,58% անկման: Պանելային վերլուծության արդյունքում առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակի ազդեցության նշանի փոփոխությունը կարող է մեկնաբանվել հետևյալ կերպ. տարածական տվյեղների վերլուծության արդյունքում, առևտրային բանկերի՝ հասարակությանը սպասարկող մասնաճյուղերի քանակը խոսում է ֆինանսական

ծառայությունների հասանելիության մակարդակի մասին և, բնականաբար, ունի դրական ազդեցություն: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում հեռահար ծառայությունների հասանելիության, ինչպես նաև FinTech տեխնոլոգիաների զարգացման արդյունքում զարգացած երկրներում առևտրային բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից արդեն իսկ տեղեկացվել է նկատվում ֆինանսական ծառայությունների մատուցումը կետորոնացնել առցանց հարթակներում, ինչը հնարավորություն է տալիս հեռախոսային հավելվածների կիրառման և On Line բենքինգի ծառայությունների միջոցով խնայել ռեսուրսներ և ստանալ լրացուցիչ ճկունության հնարավորություն: Այսպիսով, կարող ենք փաստել, որ առևտրային մասնաճյուղերի քանակը դեռևս ունի դրական նշանակալի ազդեցություն մեկ շնչի հաշվով ՀՆԱ վրա, սակայն ժամանակի ընթացքում այդ ազդեցությունը կփոխի իր նշանը՝ տեղը զիջելով առցանց ֆինանսական ծառայությունների մատուցման ավելի ժամանակակից մեթոդների:

Մասնավոր հատվածին տրամադրված վարկերի ծավալի ազդեցությունը ևս դրական է: Վարկավորման՝ որպես ՀՆԱ% մեկ տոկոսային կետով աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ 0,47% աճի:

Տոկոսադրույքի սփրեդը, ինչպես նախորդ մոդելում, այս դեպքում նույնպես ունի բացասական ազդեցություն: Ներգրավվող և տեղաբաշխվող տոկոսադրույքների տարբերության մեկ տոկոսային կետով աճը այլ հավասար պայմաններում հանգեցնում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ 0,86% նվազման:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ քաղաքական և տնտեսական ինստիտուտների և ֆինանսական ինստիտուտների փոխազդեցությունը բարդ և սիմբիոտիկ հարաբերություն է: Կայացած քաղաքական և տնտեսական ինստիտուտների աջակցությամբ կայուն իրավական և կարգավորող դաշտի ստեղծումը նպաստում է ֆինանսական հաստատությունների աճին: Իր հերթին, լավ գործող ֆինանսական հաստատությունները նպաստում են տնտեսական աճին ֆինանսական միջնորդության, նորարարությունների խթանման և ֆինանսական կայունության պահպանման միջոցով: Այս հարաբերությունների ըմբռնումը և զարգացումը կարևոր է քաղաքականություն մշակողների և շահագրգիռ կողմերի համար, որոնք նպատակ ունեն խթանել կայուն տնտեսական զարգացումը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ֆինանսական արքեպիսկոպոս»** գլխում ներկայացված է ՀՀ տնտեսության օրինակով ֆինանսական արքեպիսկոպոսի մեխանիզմի ազդեցության գնահատումը: Նախ ՀՀ-ում արքեպիսկոպոսի մեխանիզմի միկրոհիմքերի բացահայտման նպատակով էմպիրիկ վերլուծության միջոցով գնահատվել է, թե կազմակերպությունների ներդրումային որոշումների կայացման խնդրում որքանով ազդեցություն ունի ընկերությունների կողմից ֆինանսական կազմակերպություններից միջոցների ներգրավման արտաքին ֆինանսավորման պրեմիումը, որը իր մեջ արտացոլելու է վարկավորման շուկայում առկա ինֆորմացիոն ասիմետրիաները: Այդ նպատակով

ուսումնասիրվել են 6220 հայկական կազմակերպությունների հաշվեկշռային և եկամուտ/ծախսերի հաշվետվությունների տվյալներ 2008-2020 թթ. ժամանակահատվածում՝ տարեկան պարբերականությամբ: Այնուամենայնիվ, ոչ բոլոր կազմակերպություններն են, որոնց տվյալները հասանելի են նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի, ինչի արդյունքում հավաքագրված տվյալները իրենցից ներկայացնում են չբալանսավորված պանելային տվյալներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չբալանսավորված պանելային տվյալների առկայության պարագայում տարբեր ժամանակահատվածների տվյալների համեմատականության հետ կապված կարող են առաջանալ որոշակի թերություններ, առանձնացվել են նաև բալանսավորված պանելային տվյալներ՝ ընդգրկելով 2017-2019թթ. ժամանակահատվածում 250 կազմակերպության հաշվեկշռային և եկամուտ/ծախսերի տվյալներ, որոնք նշված ժամանակահատվածներից յուրաքանչյուրում հասանելի են եղել: Վերլուծության նպատակով դիտարկվել են կազմակերպությունների հաշվեկշռային և եկամուտ/ծախս հաշվետվությունների հետևյալ ցուցանիշները՝ իրացվելի միջոցներ, հիմնական միջոցներ, ընդամենը ակտիվներ, սեփական կապիտալ, ընդամենը պարտավորություններ, հասույթ (միջին ամսեկան կտրվածքով), այլ ծախսեր (միջին ամսեկան կտրվածքով), վարկերի տոկոսային ծախս (միջին ամսեկան կտրվածքով), վարկերի գրավային ապահովվածություն, ֆինանսական պարտք, տոկոսային ծախս/հասույթ հարաբերակցություն: Արդյունքները ամփոփված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Սկզբնական ընտրանքի վիճակագրական ամփոփ տվյալները

Փոփոխականներ	Դիտարկումների քանակ	Միջին	Ստանդարտ շեղում
Իրացվելի միջոցներ (ՀՀ դրամ)	9499	2,357,673	50,292,362
Հիմնական Միջոցներ(ՀՀ դրամ)		173,894,495	1,165,319,570
Ընդամենը Ակտիվներ(ՀՀ դրամ)		230,176,183	1,916,287,151
Սեփական Կապիտալ(ՀՀ դրամ)		169,909,608	1,644,268,88
Ընդամենը Պարտավորություններ(ՀՀ դրամ)		60,266,575	432,379,622
Հասույթ(ՀՀ դրամ)		28,090,998	267,276,933
Այլ Ծախսեր(ՀՀ դրամ)		665,623	1,220,566
Վարկերի Տոկոսային Ծախս (ՀՀ դրամ)		526,059	20,333,352

Վարկերի Գրավային Ապահովվածություն		139%	203%
Ֆինանսական Պարտք (<< դրամ)		4,441,026	158,026,399
Տոկոսային Ծախս/Հասույթ		1.02%	2.18%

Աշխատանքում որպես կազմակերպության ֆինանսավորման պայմանները չափող փոփոխական վերցվել է տոկոսային ծախսերի և հասույթի հարաբերությունը (այսուհետ՝ տոկոսային ծախս):

Որպես կազմակերպության ներդրումային որոշումները չափող փոփոխական վերցվել է հիմնական միջոցները (հազար դրամ), որի փոփոխությունը կդիտվի որպես տվյալ ժամանակահատվածում կազմակերպության կողմից իրականացված ներդրում, և ուղղակի կապի մեջ է վերջինիս զուտ արժեքի հետ:

Էկոնոմետրիկական հետազոտությունը իրականացվել է բալանսավորված և չբալանսավորված պանելային տվյալների համար Մոմենտների ընդհանրացված մեթոդով՝ դինամիկ պանելային մոդելով: Մոդելը մաթեմատիկական տեսքով հետևյալն է՝

$$\begin{aligned} \Delta Total\ Fixed\ Assets(i, t) &= \beta_1 * \Delta Sales\ Revenue(i, t) + \beta_2 * \Delta Total\ Assets(i, t) + \beta_3 \\ &* \Delta Financial\ Debt(i, t) + \beta_4 * \Delta Other\ Expenses(i, t) + \beta_5 \\ &* \Delta Interest\ Expenses(i, t) \end{aligned}$$

Որտեղ՝

Total Fixed Assets-կազմակերպության հիմնական միջոցները (<< դրամ)

Sales Revenue- կազմակերպության հասույթները (միջին ամսեկան պարբերականությամբ) (<< դրամ)

Total Assets- կազմակերպության ընդհանուր ակտիվները (<< դրամ)

Financial Debt- կազմակերպության ֆինանսական պարտքը, որը իրենից ներկայացնում է գործող վարկերի ընթացիկ գումարների հանրագումարը (<< դրամ)

